ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԽԱԼԱՖՅԱՆԻՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև 2025 թվականի հուլիսի 14-ը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության փորձագետ Հեղինե Ենգոյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները՝

1) իրականացրել եմ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիմումների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրություն՝ ներկայացնելով առաջարկություններ վարույթի հարուցման կամ հարուցումը մերժելու կապակցությամբ,

2) մշակել եմ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և վարույթի հարուցումը մերժելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշումների նախագծեր,

3) մշակել եմ վարքաձի կանոնների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացությունների նախագծեր,

4) մասնակցել եմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նիստերին՝ ներկայացնելով վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները,

5) մասնակցել եմ օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշումների մշակման աշխատանքներին:

Հանրային ծառայողների վարքագծի
վերահսկողության վարչության փորձագետ՝
Հեղինե Ենգոյան